

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՆԱՄԱՆԱՐԱՆ

# «ԹԱՆԳԱՐԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»

դասընթացի ուսումնական ծրագիր -  
մեթոդական ուղեցույց

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**«ԹԱՆԳԱՐԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»**

*դասընթացի ուսումնական  
ծրագիր-մեթոդական ուղեցույց*

ԵՐԵՎԱՆ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2026

ՀՏԴ 069.01(072)

ԳՄԴ 79.1

Թ 221

*Հրատարակության է երաշխավորել  
ԵՊՀ գիտական խորհուրդը:*

*Կազմող՝* արվեստագիտության թեկնածու

**Մարինե Պետիկի Մինասյան**

*Գրախոսներ՝* արվեստագիտության թեկնածու, դոցենտ

**Մաթենիկ Վլադիմիրի Վարդանյան**

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

**Հռիփսիմե Վահրամի Պիկիչյան**

Թ 221 «Թանգարանագիտություն» դասընթացի ուսումնական ծրագիր-մեթոդական ուղեցույց / Կազմ.՝ **Մ. Պ. Մինասյան.** - Երևան, ԵՊՀ հրատ., 2026, 38 էջ:

Ուղեցույցի նպատակն է ուսանողներին ծանոթացնել «Թանգարանագիտություն» դասընթացի թեմատիկ բովանդակությանը, իրագրելի ուսումնառության ընթացակարգերի, աշխատաձևերի և ակնկալվող արդյունքների մասին, դրանով իսկ նպաստել նրանց մասնագիտական կայացմանն ու սույն մոդուլ-դասընթացի արժևորմանը:

Դասընթացի ծրագիրը հասցեագրված է ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների բարձր կուրսերի ուսանողներին, ինչպես նաև այն մասնագետներին ու դասավանդողներին, որոնք առնչվում են արվեստագիտության և թանգարանագիտության տեսակիրառական և գործնական արդի խնդիրների հետ:

ՀՏԴ 069.01(072)

ԳՄԴ 79.1

ISBN 978-5-8084-2749-5

© ԵՊՀ հրատ., 2026

© Մ. Պ. Մինասյան, 2026

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Թանգարանագիտություն» դասընթացի ուսումնական ծրագիրը նախատեսված է ԵՊՀ պատմության ֆակուլտետի հայ արվեստի պատմության և տեսության ամբիոնի «Արվեստաբանություն» մասնագիտացման բակալավրի կրթական ծրագրով սովորող երրորդ կուրսի ուսանողների համար:

«Թանգարանագիտություն» կրթական մոդուլը ներառված է Արվեստաբանության բակալավրի կրթական ծրագրի մասնագիտական կառուցամասի պարտադիր դասընթացների շարքում: Դասընթացի սույն ուսումնական ծրագիրն ամբողջացնում է թանգարանագիտության տեսության ու մեթոդիկայի ուսումնասիրման ոլորտը:

«Թանգարանագիտություն» մոդուլ-դասընթացի **նպատակն է՝** ուսանողներին հաղորդակից դարձնել թանգարանների և թանգարանային գործի տեսության և պրակտիկայի հիմնահարցերին:

Դասընթացի **խնդիրներն են՝**

- 1) ուսանողներին ներկայացնել թանգարանների պատմությունը, գործառույթները և զարգացման փուլերը:
- 2) թանգարաններ և պատկերասրահներ այցելություններով ուսանողների շրջանում ձևավորել իրական պատկերացումներ թանգարանների գործունեության, թանգարանային նմուշների հաշվառման, նկարագրության, պահպանման և հանրահռչակման վերաբերյալ,
- 3) սովորեցնել թանգարանների, թանգարանագիտության վերաբերյալ գիտական վերլուծություն կատարելու, ինքնուրույն գիտական աշխատանք գրելու կիրառական հմտություններ:

Դասընթացի **կրթական վերջնարդյունքները** ենթադրում են, որ ուսումնառության ավարտին ուսանողը կունենա.

***ա) մասնագիտական գիտելիք և իմացություն***

- ներկայացնելու Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում գործող տարբեր թանգարանների գործունեության մասին իր գիտելիքները,
- բացատրելու և մեկնաբանելու թանգարանների գործառույթները, հասարակական կյանքում նրանց դերն ու նշանակությունը, ինչպես նաև թանգարանային առարկաների պահպանման և հաշվառման առանձնահատկությունները,

***բ) գործնական մասնագիտական կարողություններ՝***

- արժևորելու ու արվեստաբանորեն վերլուծելու գեղանկարչական, քանդակագործական, գրաֆիկական և դեկորատիվ-կիրառական առարկաները,
- կատարելու գիտահետազոտական աշխատանքներ թանգարանագիտության բնագավառում,
- առանձին հոդվածներով ներկայանալու գիտահանրամատչելի ամսագրերում, թանգարանները ներկայացնող բուկլետներում,
- աշխատելու թանգարաններում՝ որպես գիտական աշխատող, էքսկուրսավար (գիդ), ցուցահանդեսների և միջոցառումների համակարգող:

**Դասընթացի աշխատաձևերն** ընդգրկում են դասավանդման և ուսումնառության հետևյալ միջոցներն ու մեթոդները.

- *դասախոսություններ՝* տեսական նյութի մատուցում,
- *արտալսարանային դասախոսություններ՝* թանգարանային այցելություններ և գործնական փորձի ձեռքբերում,
- *հյուր դասախոսություններ՝* ոլորտի մասնագետների մասնակցությամբ,
- *քննարկումներ՝* ուսանողների ակտիվ ներգրավմամբ,

---

Նկատարվում է, որ նշված գործնական կարողությունների ձևավորումը հնարավոր կլինի իրագործել *Թանգարանագիտություն* առարկային հատկացվող մասնագիտական պրակտիկաների ընթացքում:

- *ինքնուրույն հետազոտություն*՝ ռեֆերատ (թանգարանային այցերի վերլուծություն՝ դիտարկումներով և առաջարկներով),
- *խմբային կամ ինքնուրույն աշխատանք*՝ պրեզենտացիա (սահիկաշարի ձևավորում և ներկայացում):

Դասընթացի ուսումնասիրության առարկան ունի **միջգիտակարգային բնույթ**: Այն կապված է ինչպես հասարակական, հումանիտար, այնպես էլ բնագիտական առարկաների հետ, ընդ որում՝ ավելի շատ ընդհանրություն ունի հատկապես այն գիտությունների հետ, որոնցով պայմանավորվում է այս կամ այն թանգարանի պրոֆիլը:

Դասընթացն ընդգրկված է **առանց եզրափակիչ գնահատման դասընթացների** շարքում: Առարկան հաշվարկված է **30 ժամ** դասախոսության համար: Առարկայի ընդհանուր կրեդիտայնությունը **3 ԿՓՀ (ECTS) կրեդիտ** է:

Դասընթացի գնահատման բաղադրիչները և դրանց հատկացվող առավելագույն միավորը ներկայացված են աղյուսակ 1-ում:

*Աղյուսակ 1*

**Դասընթացի բաղադրիչները և գնահատման կարգը**

№	Բաղադրիչները	Գնահատումը		3 կրեդիտ
		Հատկացվող առավելագույն միավորը	Բաղադրիչների ընդհանուր կշիռը	
•	1-ին ընթացիկ	20	(100%)	
•	2-րդ ընթացիկ			
•	ընթացիկ ստուգում			
•	մասնակցություն			

Սույն ուղեցույցի կառուցվածքը համապատասխանում է դասընթացի նյութին և հայեցակարգին: Դրա մեթոդաբանական հիմքը թանգարանի՝ որպես հարաշարժ սոցիալ-մշակութային ինստիտուտի մասին պատկերացումն է, որի ժամանակակից տիպաբանությունը ձևավորվում է հասարակության և պետության մեջ տեղի ունեցող քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային փոխակերպումների ազդեցության ներքո:

Ուղեցույցը բաղկացած է ներածությունից, «Թանգարանագիտություն» դասընթացի ուսումնական ծրագրի բովանդակությանը համապատասխան բաժիններից, հանձնարարելի մասնագիտական գրականության ցանկից և ուսանողների համար դասընթացի նյութն ավելի խորը հասկանալու ու հեշտությամբ յուրացնելու համար անհրաժեշտ մեթոդական ցուցումներից:

Ուղեցույցում մասնագիտական տեղեկատվություն ներառելու չափանիշը ոչ թե տարատեսակ աղբյուրների համապարփակ ընդգրկումն է, այլն դասընթացի ընդհանուր հայեցակարգը փոխանցելու համար ավելի լայն ներկայացուցականության հասնելու ձգտումը:

Դասընթացի նյութը փորձարկվել է ԵՊՀ նույն մասնագիտացման չորրորդ կուրսի դասախոսությունների ընթացքում, իսկ հիմնական հայեցակարգային դրույթները բազմիցս քննարկվել են գիտագործնական տարբեր միջոցառումների ժամանակ:

## ԹԱՆԳԱՐԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՄԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ\*

Թանգարանագիտությունը (Museum Studies) մշակութային ժառանգության ուսումնասիրության այն ճյուղն է, որը հետազոտում է թանգարանների գաղափարական հիմքերը, նրանց գործունեության կազմակերպումը, հասարակական նշանակությունը, ինչպես նաև թանգարանային առարկաների գիտական քննումն ու ներկայացման ձևերը: Այն գիտական ուսումնասիրության առարկա է, որն ի հայտ է եկել 19-րդ դարավերջին և ուսումնասիրում է թանգարանների պատմությունը, դրանց հասարակական գործառույթները, ինչպես նաև թանգարանային գործի տեսությունն ու մեթոդիկան: Ինչպես հայտնի է, թանգարանագիտությունը դասվում է միջառարկայական գիտությունների շարքին՝ համադրելով հնագիտությունը, պատմությունը, արվեստաբանությունը, սոցիոլոգիան, մանկավարժությունն ու մշակութաբանությունը: Ժամանակակից իմաստով թանգարանը ոչ թե պարզապես հավաքածուների պահոց է, այլ դարձել է հասարակության կրթական, մշակութային և հետազոտական կենտրոն:

Ժամանակակից թանգարանագիտությունում առանձնացվում են երեք հիմնական տեսական ուղղություններ.

Ինստիտուցիոնալ կամ հաղորդակցական մոտեցման ջատագովները (Ի. Բենեշ, Ժ. Ռիվերա, Ա. Ռազզոն, Ջ. Ֆալկ, Լ. Դիրկինգ, Դ. Անդերսոն ևն) կարծում են, որ թանգարանագիտության առար-

---

\* «Թանգարանագիտության տեսամեթոդաբանական հիմքերը» խորագրով սույն ենթաբաժնի նյութը շարադրելիս հիմք ենք ընդունել թանգարանագիտության և մշակույթի պատմության բնագավառի բազում հետազոտությունների, այդ թվում՝ «Թանգարանը համաշխարհային մշակույթում» մենագրության հեղինակ, Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի պատմության ֆակուլտետի շրջանավարտ, պատմական գիտությունների թեկնածու Թ. Յու. Յուրենայի հեղինակած դասագիրքը (տե՛ս **Юренива Т. Ю., Музееведение. Учебник для высшей школы, М., Акад. Проект, 2007, 560 с.**):

կան թանգարանն է՝ որպես սոցիալ-մշակութային ինստիտուտ, որպես հաղորդակցության միջավայր, որտեղ թանգարանային առարկան դիտվում է որպես տեղեկատվություն հաղորդող, իսկ այցելուն՝ ակտիվ մեկնաբանող: Այսինքն՝ շեշտվում է թանգարանի կրթական և սոցիալական դերակատարությունը:

Նրանց ընդդիմախոսները (Կ. Շրայներ, Ա. Ռիզլ, Չ. Բրանդի, Փ. Ֆիլիպոտ, Ե. Ալեքսանդր նն) կարծում են, որ թանգարանը չի կարող լինել թանգարանագիտության առարկա, քանզի այն դիտարկում են որպես մի կենտրոն, հաստատություն, որը կոչված է կատարելու գուտ կազմակերպական գործառույթ: Այս մոտեցման հիմքում ընկած է թանգարանային առարկայի նյութական արժեքը: Ուսումնասիրվում է առարկայի ծագումը, նյութը, տեխնիկան, պահպանման և վերականգնման սկզբունքները: Այդ իսկ պատճառով հայացքների այսպիսի համակարգը ստացել է *առարկայական* կամ *օբյեկտակենտրոն մոտեցում* անվանումը:

Գոյություն ունի նաև թանգարանագիտության առարկայի հասկացման համալիր կամ գաղափարական մոտեցում: Այս մոտեցման կողմնակիցները (Զ. Ստրանսկի, Ա. Գրեգորովա, Ա. Ռազգոն, Է. Հուպեր-Գրինհիլ, Թ. Բենեթ, Ք. Դունկան, Պ. Բուրդիե, Ս. Վեյլ նն) թանգարանագիտության առարկան սահմանում են որպես օբյեկտիվ օրինաչափությունների ամբողջություն, որոնք վերաբերում են՝ ա) սոցիալական տեղեկատվության կուտակման ու պահպանման գործընթացներին, բ) թանգարանային առարկաների միջոցով գիտելիքների, ավանդույթների, պատկերացումների և հույզերի ճանաչմանն ու փոխանցմանը, գ) թանգարանի առաջացման, զարգացման, հասարակական գործառնության առանձնահատկություններին ու թանգարանային գործին: Նրանք կարևորում են հասարակական ու խորհրդանշական իմաստների ուսումնասիրությունը: Թանգարանը դիտվում է որպես իմաստների ստեղծման վայր, այլ ոչ թե գուտ նյութական ժառանգության պահոց:

Վերոգյալ հիմնական երեք ուղղություններից գատ՝ կարելի է դիտարկել նաև տեսակետների մեկ այլ խումբ՝ կախված այն բանից, թե ինչպես է թանգարանը ներկայացնում իր հավաքածուն և ինչպես է այցելուն ընկալում այն: Այս համատեքստում.

- Մեկնաբանման տեսությունը նպատակ ունի բացատրել առարկայի իմաստն այնպես, որ այն դառնա հասկանալի հանրությանը:
- Սոցիալ-կուլտուրոլոգիկոմը փաստում է, որ այցելուն ինքն է գտնում իմաստներ՝ ելնելով սեփական փորձից:
- Նարատիվացման մոտեցումը ենթադրում է, որ թանգարանային ցուցադրությունը ներկայացվում է որպես պատմողական կառուցվածք, որտեղ առարկաները «պատմում են»:

Այսպիսով, կարելի է հավաստանշել, որ թանգարանագիտության օբյեկտը համարվում է թանգարանն ու թանգարանային գործը, որպես հասարակական երևույթ՝ իր բոլոր դրսևորումներով:

Թանգարանագիտությունն օգտագործում է հումանիտար և բնական գիտություններից փոխառված մեթոդներ՝

- հատուկ և օժանդակ պատմական գիտակարգերի, մանկավարժության, հոգեբանության և սոցիոլոգիայի մեթոդներ,
- ռենտգենագրություն, լուսակազրություն (սպեկտրոգրաֆիա) և բնական գիտությունների այլ մեթոդներ,
- դաշտային հետազոտության և անմիջական դիտման մեթոդներ,
- փորձարարական մեթոդներ՝ ներառյալ պատմական փորձարարությունը,
- մոդելավորման և այլ մեթոդներ:

Միաժամանակ՝ ինտեգրված լինելով թանգարանագիտության կառուցվածքում և հարմարեցված լինելով դրա խնդիրների լուծմանը, այս մեթոդները հանդես են գալիս միազումարության մեջ, և այդպիսով՝ ձեռք են բերում նոր որակ:

Թանգարանագիտությանը բնորոշ մյուս առանձնահատկությունն այն է, որ որպես դեռևս ձևավորվող գիտակարգ, ցայժմ այն չունի իր սեփական լեզուն: Թանգարանագիտական հասկացությունային ապարատի զինանոցում այսօր առկա են՝

- գիտելիքի այլ բնագավառներից փոխառված եզրույթներ,
- փոխառված, բայց թանգարանագիտության հետազոտական նպատակներին հարմարեցված ու սկզբնականից տարբերվող իմաստ ձեռք բերած եզրույթներ,
- և վերջապես, բուն թանգարանագիտական եզրույթներ, որոնք չկան և չեն հանդիպում այլ գիտությունների լեզվով:

Այնուամենայնիվ, ներկայումս ակնհայտ է հասկացությային ապարատի ճշգրտման, միասնացման (ինտեգրման) և նոր մակարդակի անցման անհրաժեշտությունը:

Թանգարանագիտության կառուցվածքային բաղադրատարրերի շրջանակը ներառում է.

**Պատմությունն ու պատմագրությունը՝** ուսումնասիրում են, թե ինչպես են ձևավորվել թանգարանները տարբեր դարաշրջաններում, ինչ դեր են ունեցել պատմական միջավայրում, ինչպիսի թանգարանային քաղաքականություն է իրականացվել, ինչպես է ձևավորվել թանգարանային համակարգը և կազմակերպվել ոլորտի աշխատանքը: Միննույն ժամանակ ուսումնասիրվում է, թե ինչպես են այս հարցերն անդրադարձել գիտական գրականության մեջ և ինչ տեղ են զբաղեցնում թանգարանագիտության պատմության զարգացման ընթացքում:

**Թանգարանագիտության տեսական հիմքը՝** սովորաբար բաժանվում է չորս հիմնական բաղադրիչի.

1. *Թանգարանագիտության ընդհանուր տեսությունը:* Այս բաժինը սահմանում և ուսումնասիրում է թանգարանագիտության ուսումնասիրման դաշտը՝ դրա օբյեկտը, առարկան, մեթոդները և կառուցվածքային միավորները: Այն որոշում է թանգարա-

նագիտության տեղը գիտական համակարգում, ձևավորում է մասնագիտական տերմինաբանությունը, շեշտադրում է թանգարանի և թանգարանային առարկայի երևույթները, ինչպես նաև անդրադառնում է թանգարանների հասարակական նշանակությանը, թանգարանային ցանցի ձևավորմանը, թանգարանների դասակարգման և տիպաբանության հիմնախնդիրներին:

2. *Փաստաթղթավորման տեսությունը*: Այս ճյուղը հետազոտում է թանգարանային ֆոնդերի համալրման սկզբունքները՝ մասնավորապես, թե ինչպես է ընտրվում որևէ առարկա որպես թանգարանային հավաքածուի արժանավոր և վստահելի մաս: Այն մշակում է հավաքագրման մեթոդաբանությունը և դրա գործնական կիրառման մեթոդիկայի հիմնահարցերը:

3. *Գիտաֆոնդային աշխատանքի տեսությունը*: Այստեղ ուսումնասիրությունն ուղղված է թանգարանային առարկաների արժեքի բացահայտմանը և դրանցում ամփոփված տեղեկությունների ճանաչման մեխանիզմներին: Այս ուղղությունը ներառում է առարկաների գիտական վերլուծությունը, դրանց հաշվառման գործընթացները, ինչպես նաև պահպանման կազմակերպումը:

4. *Հաղորդակցության տեսությունը*: Այս բաժինը դիտարկում է թանգարանը որպես հաղորդակցական հարթակ՝ ուսումնասիրելով, թե ինչպես է փոխանցվում տեղեկատվությունը թանգարանային միջավայրում: Քննության առարկա են դառնում կրթական և մշակութային ծրագրերը, ինչպես նաև այն, թե ինչ ազդեցություն են ունենում թանգարանային հաղորդակցման տարբեր միջոցներն ու մեթոդները այցելուների տարբեր խմբերի վրա:

**Կիրառական թանգարանագիտությունն** ընդգրկում է երեք կարևոր ուղղություն.

1. *Գիտական մեթոդաբանություն*: Այս բաժինը վերաբերում է թանգարանային գործունեության բոլոր ոլորտներին: Մեթոդաբանական ուսումնասիրությունները լինում են ինչպես ընդհանուր (բնորոշ բոլոր թանգարաններին), այնպես էլ հատուկ՝ ուղղված որոշակի տիպի կամ մասնագիտացված թանգարաններին:

2. *Թանգարանային աշխատանքի տեխնիկա*: Այն հիմնվում է գիտական մեթոդական հիմքերի վրա և զբաղվում է թանգարանային շենքերի նախագծմամբ, ցուցադրական նյութերի ներկայացման արդյունավետ եղանակներով, տեղեկատվական տեխնոլոգիաներով, ինչպես նաև թանգարանային առարկաների ֆիզիկական վիճակի հետազոտմամբ, պահպանմամբ և վերականգնմամբ:

3. *Թանգարանային գործի կազմակերպում ու կառավարում*: Այս ոլորտը ներառում է թանգարանային կառավարման և մարքեթինգի հարցերը՝ ապահովելով թանգարանների արդյունավետ աշխատանքը և զարգացման ռազմավարական ուղղությունները: Ժամանակակից թանգարաններն իրականացնում են կրթական ծրագրեր, կազմակերպում աշխատարաններ, որոնք հիմնված են մշակութային մանկավարժության սկզբունքների վրա՝ ընդգծելով համագործակցությունը, մասնակցայնությունը և ներառականությունը:

**Թանգարանային աղբյուրագիտությունը** կենտրոնանում է թանգարանային առարկաների ուսումնասիրության վրա՝ մշակելով դրանց հայտնաբերման, գիտական վերլուծության և գործածման համար անհրաժեշտ տեսական հիմքերն ու մեթոդները:

Այսպիսով, կարող ենք եզրահանգել, որ թանգարանագիտությունը դիմամիկ գիտություն է, որը միավորում է տեսական մտածողությունը և գործնական հմտությունները: Այն ուսումնասիրում է ոչ միայն առարկաների նյութական կամ գեղարվեստական արժեքը, այլև այն, թե ինչպես են այդ առարկաները դառնում իմաստների կրող, հասարակության կրթության աղբյուր և մշակութային հիշողության հիմք: Հետևաբար թանգարանները ժամանակակից աշխարհում գիտելիքի տարածման, մշակութային երկխոսության և հանրային ներգրավման կարևորագույն հարթակներ են:

Հաջորդիվ տրված է դասընթացի ուսումնաթեմատիկ պլանը (թեմատիկ դասաբաշխումը):

**ԹԵՄԱՏԻԿ ԴԱՍԱԲԱՇԽՈՒՄ**

<b>Շարքաթ</b>	<b>Թեմա</b>	<b>Ժամ</b>
<b>I</b>	Թանգարանագիտության ներածություն. ուսումնական առարկայի օբյեկտը, նպատակը, խնդիրները	2
<b>II</b>	Թանգարանն անտիկ մշակույթի հարացույցում. նախաթանգարանային շրջան	2
<b>III</b>	Հավաքչական աշխատանքները միջնադարում	2
<b>IV</b>	Թանգարանի՝ որպես սոցիալ-մշակութային ինստիտուտի ծագումն ու զարգացումը	2
<b>V</b>	Թանգարանների զարգացման պատմությունը	2
<b>VI</b>	Թանգարանների գիտական դասակարգումը, տիպաբանություն ու դասակարգման չափանիշները	2
<b>VII</b>	ՀՀ տարածքում գտնվող թանգարանները, նրանց բնույթն ու գործունեությունը ( <i>արտալսարանային դասախոսություն՝ ՀԱՊ և ՀՊԹ</i> )	2
<b>VIII</b>	Թանգարաններում տարվող գիտահետազոտական աշխատանքն ու դրա կարևորությունը	2
<b>IX</b>	<b>1-ին ընթացիկ</b>	
<b>X</b>	Գիտաֆոնդային աշխատանքները թանգարաններում	2
<b>XI</b>	Թանգարանային ֆոնդերի համալրումը, հաշվառումն ու պահպանումը	2
<b>XII</b>	Թանգարանային ցուցադրությունների կազմակերպումն ու ցուցադրման հիմնական մեթոդները	2

<b>XIII</b>	Թանգարանային սոցիոլոգիա և մանկավարժություն (արտալսարանային դասախոսություն՝ ՌԱԹ)	2
<b>XIV</b>	Թանգարաններում տարվող կրթամշակութային աշխատանքները	2
<b>XV</b>	Թանգարանային մենեջմենթ և մարքեթինգ. հաղորդակցական մենեջմենթ և էթիկա (արտալսարանային դասախոսություն՝ ՌԱԹ և ԳԱԿ)	2
<b>XVI</b>	Թանգարանային կանոնակարգն ու թանգարանների թվայնացման գործընթացը. թվայնացված թանգարան	2
<b>XVII</b>	<b>2-րդ ընթացիկ</b>	

## ԴԱՍԸՆԹԱՑԻ ԹԵՄԱՏԻԿ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

### **Թեմա 1. Թանգարանագիտության ներածություն. ուսումնական առարկայի օբյեկտը, նպատակը, խնդիրները**

Թանգարանագիտությունն դասընթացի ուսումնասիրության առարկան, նպատակը և խնդիրները: Ուսումնական առարկայի հիմնական թեմատիկ կառուցվածքը, օբյեկտը, մեթոդը, գրականության ցանկը, ուսումնական գործընթացը, պայմաններն ու գնահատմանը ներկայացվող պահանջները: Թանգարանագիտության դերը 21-րդ դարի թանգարանների համար:

#### ***Առաջադրանք***

- 1. Կանխավ ծանոթանալ գրականության ցանկում ներկայացված նյութերի հետ, ցուցակագրել անհասկանալի հարցերը, ներկայացնել և ստանալ պարզաբանումներ:*
- 2. Փորձել պատասխանել հետևյալ հարցադրումներին.*
  - Ինչի՞ համար է պետք ուսումնասիրել թանգարանագիտություն առարկան:*
  - Ի՞նչ եմ ուզում սովորել թանգարանագիտություն ուսումնասիրելով:*

### **Թեմա 2. Թանգարանն անտիկ մշակույթի հարացույցում. նախաթանգարանային շրջան**

Պաշտամունքային և ծիսակարգային հավաքչությունը հին հասարակություններում (եգիպտական դամբարաններ, շումերական տաճարներ): Նախաթանգարանային հավաքչությունը Հին Հունաստանում: Բնական և արհեստական ծագում ունեցող սրբազան իրեր: «Մուսեյոն», «Պինակոտեկա» և «Պինակի» հասկացությունները: Նախաթանգարանային հավաքածուների կազմումը հելլենիզմի դարաշրջանում: Մասնավոր և հանրային հավաքածուները Հին Հռոմում: Առարկաների նախաթանգարանային հավաքածուների ձևերը:

### ***Առաջադրանք***

1. Ուսումնասիրել թեմատիկ գրականությունը և անհասկանալի հարցերը դուրս գրել քննարկման նպատակով:
2. Պատասխանել հետևյալ հարցադրումներին.
  - Նախաթանգարանային հաստատությունների ի նչ ձևեր կան:
  - Ովքե՞ր են առաջին անգամ մշակութային շրջանառության մեջ դրել «թանգարան» բառը:
  - Ո՞րն է հելլենիզմի դարաշրջանի բնութագրական գիծը:

### **Թեմա 3. Հավաքչական աշխատանքները միջնադարում**

Եկեղեցական գանձարանների հավաքածուները: Միջնադարյան աշխարհիկ տիրակալների գանձարանները: Ֆրանսիայի թագավոր Կարլ V-ի գանձարանները: Մասնավոր հավաքչություն: Միջնադարյան գանձարանները որպես գեղարվեստական, հուշարձանային և պատմական նշանակության հավաքածուներ:

### ***Առաջադրանք***

1. Համացանցի ու գրականության աղբյուրների հիման վրա կազմել միջնադարյան հավաքորդների ցանկ:
2. Հիմնավորել ու բացատրել, թե ինչո՞ւ է հրապարակայնությունը (հանրայնացումը) կարևոր գործոն թանգարանների զարգացման գործում:
3. Պատասխանել հետևյալ հարցադրումներին.
  - Ի՞նչ գործառույթներ էին կատարում միջնադարյան եկեղեցիների գանձերը:
  - Ի՞նչ հիմնավորմամբ են ժամանակակից հետազոտողները միջնադարյան եկեղեցական միջավայրը համարում թանգարանային ցուցահանդեսների «նախատիպ»:

**Թեմա 4. Թանգարանի՝ որպես սոցիալ-մշակութային ինստիտուտի ծագումն ու զարգացումը**

Թանգարան հասկացությունը. սահմանումն ու առանձնահատկությունները: Վերածննդի դարաշրջանի բնութագիրը: Հավաքչությունը Վերածնության դարաշրջանում: Թանգարանների առաքելությունը և առաջացման նախադրյալները: Թանգարանների նախատիպերը:

***Առաջադրանք***

1. Ուսումնասիրել վերածնության դարաշրջանն արտացոլող աղբյուրները, առանձնացնել առավել նշանակալիցները և ներկայացնել դրանց կարևորությունը:
2. Նկարագրել հանրային թանգարանի հայեցակարգը:
3. Պատասխանել հետևյալ հարցադրմանը.
  - Ինչո՞ւ է վերածնության շրջանն ընդունված դիտարկել որպես հավաքչության «Ոսկե դար»:

**Թեմա 5. Թանգարանների զարգացման պատմությունը**

Աշխարհի հռչակավոր կամ առավել հայտնի թանգարանները, դրանց գործունեությունն ու պատմական զարգացման ընթացքը: Թանգարանային գործի զարգացման հիմնական փուլերը:

***Առաջադրանք***

1. Ուսումնասիրել թանգարանների առաջացման պատմությունն ու պատմագրությունը, գնահատել դրանց լուսաբանումը գիտական գրականության մեջ:
2. Նկարագրել աշխարհի հռչակավոր ու յուրահատուկ թանգարաններից որևէ մեկի ստեղծման պատմությունը, հավաքածուն և ներկայիս գործունեությունը:
3. Բնութագրել եվրոպացի միապետների արվեստի հավաքածուները 16-րդ և 17-րդ դարերում:

**Թեմա 6. Թանգարանների գիտական դասակարգումը, տիպաբանություն ու դասակարգման չափանիշները**

Թանգարանների պրոֆիլավորումը և դասակարգման հիմնական եղանակները: Թանգարանների գիտական դասակարգման ժամանակակից համակարգերը: Հանրային նշանակության թանգարանների տեսակները: Թանգարանների խմբերն ըստ պատկանելության ձևի՝ պետական, հանրային ու մասնավոր:

***Առաջադրանք***

- 1. Սահմանել թանգարանների տեսակները, բերել օրինակներ:*
- 2. Ներկայացնել սեփական դատողությունները թանգարանների և դրանց դասակարգման վերաբերյալ:*
- 3. Պատասխանել հետևյալ հարցադրումներին.*
  - Թանգարանների դասակարգման ի՞նչ չափանիշներ գիտեք:*
  - Ո՞րն է թանգարանի պրոֆիլը:*
  - Ձեր կարծիքով, ո՞րն է դպրոցական թանգարանների առանձնահատկությունը: Կարո՞ղ են դրանք դասակարգվել որպես կրթական թանգարաններ:*

**Թեմա 7. ՀՀ տարածքում գտնվող թանգարանները, դրանց բնույթն ու գործունեությունը**

Նախաթանգարանային հավաքածուները հին և միջնադարյան Հայաստանում: Հայկական թանգարանների ստեղծման գործընթացը: Հայաստանում թանգարանների ստեղծման շրջափուլերը: Հայկական թանգարանների հիմնական բնութագիրը և թանգարանային քաղաքականությունը:

***Առաջադրանք***

- 1. Բացահայտել և ներկայացնել ՀՀ գործող թանգարաններն ըստ ստեղծման ժամանակահատվածի:*

- 2. Կատարել ՀՀ թանգարանների համեմատական վերլուծություն:*
- 3. Բնութագրել Հայաստանում առկա թանգարանային ցանցի ձևավորման հիմնական ուղղությունները և բերել օրինակներ:*

### **Թեմա 8. Թանգարաններում տարվող գիտահետազոտական աշխատանքն ու դրա կարևորությունը**

Թանգարանային գործունեության հիմնական ուղղությունները: Թանգարանների գիտահետազոտական գործունեությունն ու դրա զարգացման ուղղությունները: Թանգարանի գիտական հայեցակարգի մշակումը: Թանգարանային ֆոնդերի և առարկաների պահպանման և վերականգնման մեթոդաբանական հետազոտություններ:

#### ***Առաջադրանք***

- 1. Ուսումնասիրել գիտահետազոտական աշխատանքներին ներկայացվող գիտականության չափանիշները և վեր հանել թանգարանի գիտական հայեցակարգի մշակման հիմքերը:*
- 2. Վերլուծել թանգարանների գիտահետազոտական գործունեության զարգացման առանձնահատկությունները:*

### **Թեմա 9. Գիտաֆոնդային աշխատանքները թանգարաններում**

Թանգարանների ֆոնդային աշխատանքը: Թանգարանային ֆոնդերի ժամանակակից կազմակերպումը: Թանգարանային առարկան որպես թանգարանային ֆոնդի հիմք: Թանգարանային առարկաների տիպերը: Գեղանկարչական և գրաֆիկական աշխատանքների, քանդակների, դեկորատիվ-կիրառական առարկաների ընտրության չափանիշները, որոշարկումն և վերլուծությունը: Թանգարանային առարկաների գիտական անձնագրերի բովանդակային կառուցվածքը:

### ***Առաջադրանք***

- 1. Սահմանել ժամանակակից թանգարանների դերը մշակութային ժառանգության պահպանման, ուսումնասիրման և տարածման գործում:*
- 2. Վերլուծել ֆոնդերի գիտական կազմակերպման հիմնական սկզբունքները:*
- 3. Կազմել թանգարանային որևէ առարկայի գիտական անձնագիր:*

### **Թեմա 10. Թանգարանային ֆոնդերի համալրումը, հաշվառումն ու պահպանումը**

Թանգարանային ֆոնդերի համալրումը և համալրման տեսակները՝ համակարգված (պարբերաբար), թեմատիկ և համալիր-համակցված: Համալրման հիմնական միջոցների իրականացման ձևերն ու դրանց խմբերը: Թանգարանային ֆոնդերի հաշվառումը: Սուտքագրվող առարկաների անկետավորումը, ակտավորումը, գիտական գույքագրումն ու նշահարումը: Թանգարանային ֆոնդերի համակարգչայնացումը որպես հաշվառման և փաստաթղթավորման աշխատանքի հեշտացման միջոց: Թանգարանային առարկաների պահպանումը: Թանգարանի շենքային բնութագրերը և պահպանման ռեժիմը՝ ներքին լուսավորությունը, ջերմախոնավությունը, կենսաբանական վնասատուների կանխարգելումը, ինչպես նաև արտակարգ իրադրությունների հաշվառումը:

### ***Առաջադրանք***

- 1. Նշել թանգարանային հավաքածուների համալրման հիմնական գործառույթները և դրա իրավական հիմքերը:*
- 2. Սահմանել առարկաները թանգարանային հաշվառման վերցնելու կարգը:*
- 3. Բնորոշել թանգարանային տարատեսակ առարկաների պահպանության կազմակերպման առանձնահատկությունները:*

**Թեմա 11. Թանգարանային ցուցադրությունների կազմակերպումն ու ցուցադրման հիմնական մեթոդները**

Թանգարանային ցուցադրության կազմակերպման ընդհանուր սկզբունքները: Թանգարանային առարկա և ցուցանմուշ: Ցուցադրությանը ուղեկցող տեքստերի կարևորությունը: Ցուցադրության կառուցման հիմնական մեթոդները: Ցուցադրության նախագծման բաղկացուցիչ մասերը:

***Առաջադրանք***

- 1. Ուսումնասիրել թեմատիկ գրականությունը և անհասկանալի հարցերը դուրս գրել քննարկման նպատակով:*
- 2. Մահմանել թանգարանային ցուցադրության մեթոդիկայի ժամանակակից միտումները:*
- 3. Նշել թանգարանային ցուցադրության գիտական նախագծման ժամանակակից հիմնախնդիրները:*
- 4. Թվարկել ցուցադրության կառուցման հիմնական մեթոդները:*

**Թեմա 12. Թանգարանային սոցիոլոգիա և մանկավարժություն**

Թանգարանային սոցիոլոգիան որպես այցելուների ուսումնասիրման բնագավառ: Սոցիոլոգիական հետազոտությունները որպես թանգարանի գործունեության արդյունավետությունը բարձրացնող միջոց: Անհրաժեշտ տեղեկատվության ստացման եղանակները: Թանգարանային մանկավարժությունը որպես թանգարանային հաղորդակցության ձևերն ու միջոցներն ուսումնասիրող գիտակարգ: Թանգարանային մանկավարժության հիմնական ուղղությունները:

***Առաջադրանք***

- 1. Ուսումնասիրել միջգիտակարգային թեմատիկ գրականությունը և որոշարկել թանգարանագիտության, մանկավարժության և սոցիոլոգիայի հատման կետերը:*

2. Նշել թանգարանային մանկավարժության հիմնական միտումներն այսօր:
3. Թվարկել թանգարանային սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդներն ու տեխնիկան:

**Թեմա 13. Թանգարաններում տարվող կրթամշակութային աշխատանքները**

Թանգարաններում իրականացվող էքսկուրսիոն և կրթաժամանցային աշխատանքները: Թանգարանների կրթական և մշակութային գործունեության հիմնարար ձևերը: Թանգարանային և արտաթանգարանային էքսկուրսիաներ: Ժամանակակից էքսկուրսիոն գործունեության հիմքը: Թանգարանային տոներ:

***Առաջադրանք***

1. Ուսումնասիրել թանգարանների կրթամշակութային գործունեության ընդհանրական օրինաչափությունները և դուրս բերել դրանց յուրահատկությունները:
2. Թվարկել թանգարանների մշակութային և կրթական գործունեության հիմնական ձևերն այսօր:
3. Նկարագրել թանգարանային էքսկուրսիաների տիպերը:

**Թեմա 14. Թանգարանային մենեջմենթ և մարքեթինգ. հաղորդակցական մենեջմենթ և էթիկա**

Թանգարանի կառավարման համակարգը և դրա կառուցվածքը: Թանգարանի կառավարման հիմնական գործառույթները: Կառավարման հիմնական գործիքակազմը: Թանգարանի գործունեության ներկա իրավիճակի վերլուծության ՔՏՏՏ (PEST) և ՈՒԹՇՎ (SWOT) եղանակները: Թանգարանային մարքեթինգի նպատակն ու գործառույթները: Թանգարանների գովազդն ու շուկայավարտության էթիկան: Թանգարան-հասարակություն կապերի բնութագիրը: Թանգարանային հաղորդակցության մոդելները, հիմնական սկզբունքները:

### ***Առաջադրանք***

- 1. Ուսումնասիրել թեմային առնչվող մասնագիտական աղբյուրները և առանձնացնել պարզաբանման կարիք ունեցող հարցերը:*
- 2. Թվարկել թանգարանային կառավարման հիմնական գործառույթները:*
- 3. Վերլուծել թանգարանային հաղորդակցության մեջ ընդունված և գործածվող տարբեր մոդելները:*

### **Թեմա 15. Թանգարանային կանոնակարգն ու թանգարանների թվայնացման գործընթացը. թվայնացված թանգարան**

Թանգարանների իրավական կարգավիճակը: Ազգային և միջազգային կարգավորող մարմիններ (օր.՝ ՅՈՒՆԵՍԿՕ, ԻԿՕՄ): ՀՀ-ում գործող թանգարանային օրենսդրություն և նորմատիվ ակտեր: Թանգարանի ներքին կանոնակարգի կառուցվածքը (կառավարման մոդելներ, աշխատակազմի պարտականություններ, այցելուների վարքագծի կանոններ և այլն): Թանգարանների թվայնացման գործընթացն ու դրա անհրաժեշտությունը: Թվայնացման հիմնական ուղղությունները՝ արխիվների և ցուցանմուշների սկանավորում, վիրտուալ ցուցահանդեսներ, թանգարանային կայքերի և բջջային հավելվածների զարգացում, տվյալների բազաների ստեղծում ու կառավարում: Թվայնացման հաջողված նախագծեր՝ Լուվր, Բրիտանական թանգարան, Նյու Յորքի Մետրոպոլիտեն (ՄԵՏ) թանգարան: Թվայնացման մարտահրավերները:

### ***Առաջադրանք***

- 1. Թվարկել ՀՀ թանգարանների գործունեության կարգավորման իրավական փաստաթղթերը:*
- 2. Նշել թանգարանի ներքին կանոնակարգի առնվազն երեք հիմնական բաղադրիչ:*
- 3. Համացանցում փնտրել թվայնացված թանգարաններ:*

4. Նշել թվայնացման գործնական ուղղությունները:
5. Փորձել պատասխանել հետևյալ հարցադրումներին.
  - Ո՞րն է թանգարանի հիմնական առաքելությունը:
  - Ի՞նչ դեր ունի ԻԿՕՄ-ը թանգարանային ոլորտում:
  - Ինչպե՞ս թվայնացումը կարող է փոխել թանգարանի առաքելությունը:
  - Ինչպե՞ս է թվայնացումը նպաստում հանրային ներգրավվածությանը:

## ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Ամիրյան Ս.** *Թանգարանագիտություն*. Եր.: ԵՊՀ հրատ., 2023, 394 էջ:
2. **Ավագյան Ա.** *Հայաստանում թանգարանային շինարարության պատմությունից (1920-ական թթ.)*, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական երկրորդ նստաշրջանի նյութեր, Եր.: ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ, 2007, էջ 5-8:
3. **Ավագյան Ա.** *Մշակութային արժեքի թանգարանայնացումը*, «Թանգարան» հանդես, 2009, թիվ 1, էջ 124-131:
4. **Ավագյան Կ.** *Թանգարանային առարկան թանգարանագիտության հիմնահենք*, «Թանգարան» հանդես, 2009, թիվ 1, էջ 120-124:
5. **Արտույցյան Մ.** *Թանգարանային շինարարության ժամանակակից պրինցիպները և ՀԽՍՀ պետական թանգարանը*, «Նորք» հանդես, 1926, գիրք երկրորդ, էջ 210-216:
6. **Բարսեղյան Լ.** *Հայոց ցեղասպանությանը նվիրված թանգարանային ցուցադրության կազմակերպման մի քանի հարցեր: Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցերը*, Գիտական աշխատություններ, Եր.: Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2002, թիվ 6, էջ 3-18:
7. **Գալկինա Պ. Դ. և ուրիշներ** *Սովետական թանգարանագիտության հիմունքներ* (Թարգմ.՝ Մ. Հովհաննիսյան), Եր.: ՀՍՍՌ Կուլտ. մինիստր. կուլտ. լուս. հիմնարկ. գործ. վարչ., 1960, 488 էջ:
8. **Դարյան Վ.** *Հնագիտական թանգարանները և պատմական հուշարձանների պահպանության խնդիրները*, Եր.: «Լուս-հրատ», 1940, 38 էջ:
9. *Թանգարանային մենեջմենթ և մարքեթինգ* Կազմ.՝ **Հ. Վ. Պիկիչյան, Մ. Հ. Հարոյան, Ա. Ֆ. Գրիգորյան**: Եր.: Էդիտ Պրինտ, 2007, 196 էջ:

10. *Թանգարանային մենեջմենթ և մարքեթինգ: Դասընթացի ծրագիր: Կազմ.՝ Զ. Վ. Պեկինյան, Մ. Հ. Հարոյան, Ա. Ֆ. Գրիգորյան*, Եր.: Էդիտ Պրինտ, 2007, 36 էջ:
11. *ԻԿՕՄ-ի մասնագիտական վարքագծի կանոնագիրք*, Եր.: Ժառանգություն շԿ, 2003:
12. **Կոբեյյան Խ.** *Թանգարանային առարկան՝ որպես ցեղասպանության հիշողությունը վերականգնող միավոր*, «Ցեղասպանագիտական» հանդես, 2014, թիվ 2(1), էջ 128-134:
13. **Ղաֆադարյան Կ.** *Հայաստանի թանգարանների պատմությունից*, Լրաբեր հասարակական գիտությունների, 1972, թիվ 10, էջ 20-35:
14. **Ղաֆադարյան Կ.** *Հայաստանի պետական պատմական թանգարանը*, «Պատմաբանասիրական» հանդես, 1962, թիվ 2, էջ 207-215:
15. **Ղաֆադարյան Կ.** *Միջնադարեան Հայաստանի թանգարանները, գանձատուները և ավանդատուները*, Անդաստան, 1962, թիվ 13, էջ 97-114:
16. **Ղաֆադարյան Կ.** *Սովետական Հայաստանի առաջին թանգարանը*, Լրաբեր հասարակական գիտությունների, 1974, թիվ 12, էջ 37-47:
17. **Պողոսյան Դ.** *Թանգարանը մշակութային հաղորդակցության միջավայր*, Եր.: Հեղ. հրատ., 2008, 216 էջ:
18. **Պողոսյան Դ. Ա.** *Թանգարանագիտության տեսություն և թանգարանագիտական միտքը Հայաստանում: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Եր.: Հեղ. հրատ., 2020, 276 էջ:*
19. **Պողոսյան Դ.** *ՀՀ պատմամշակութային արգելոց-թանգարանների կազմակերպման գործընթացը և սկզբունքները*, Եր., 2018, 144 էջ:
20. **Մուքիասյան Գ. Ա.** *Թանգարանագիտության և հուշարձանագիտության համատեքստում: Հոդվածների ժողովածու՝ նվիրված Երևանի պատմության խնդիրներին*, Եր., 2006, էջ 204-209:

21. Ուսումնական ծրագրեր և հանձնարարելի մատենագիտություն: Գրադարանագիտություն և մատենագիտություն: Թանգարանային գործ և հուշարձանների պահպանություն: Կազմ. Չ. Սուրիաշյան, Եր.: 2005, 92 էջ:
22. **Ананьев В. Г.** *История зарубежной музеологии.* СПб.: СПбГУ, Институт истории, 2014, 136 с.
23. **Бабенко В. С., Махлина С. Т.** *Виртуальная реальность в музейном деле.* Музей в современной культуре. Тезисы доклада на научной конференции. СПб.: СПб ГАК, 1995, с. 65-68.
24. **Барри Л., Гейл Д. Л.** *Менеджмент в музейном деле.* Учебное пособие, пер. с англ. Э. Н. Гусинского и Ю. И. Турчаниновой; под ред. А. Б. Голубовского. М.: Логос, 2002, 256 с.
25. **Бонами З. А.** *Как читать и понимать музей. Философия музея.* М.: АСТ, 2018, 224 с.
26. **Гиль А. Ю.** *Трансформация музея в культуре информационного общества.* Томск: Издательство Томского гос. унив-та, 2015, 147 с.
27. **Гнедовский М. Б.** *Музей в системе непрерывного образования.* Сер.: Музейное дело и охрана памятников. Экспресс-информ. Вып. 1/ГБЛ; НИО “Информкультура”, М., 1990, 16 с.
28. **Дубов И. В.** *Музееведение.* СПб.: Изд. дом С.-Петербур. гос. ун-та, 2004, 409 с.
29. **Душкина Л.** *Защита музеев от хищений и пожаров: практич. рук.* / Л. Душкина, Н. Принцев. М.: Гос. НИИ реставрации, 1995, 68 с.
30. **Иванова С. В.** *Пути развития музейной педагогики.* Музейная педагогика как область педагогической науки / Под общ. ред. С. В. Ивановой. М.: ФГНУ ИТИП РАО, 2012, 72 с.
31. **Иксанова И. В.** *Музееведение: естественно-научные музеи: теория и практика работы.* М., 1984, 145 с.
32. **Ионина Н. А.** *Сто великих музеев мира.* М.: Вече, 2004, 511 с.

33. **Калугина Т. П.** *Художественный музей как феномен культуры*. СПб.: Петрополис, 2-е изд., 2008, 244 с.
34. **Лысикова О. В.** *Музеи мира*: учеб. пособие к интегрир. курсу “Музеи мира”. М.: Флинта: Наука, 2002, 128 с.
35. **Мальро А.** *Голоса тишины* Пер. с фр. и коммент. Г. С. Беляевой; предисл. З. И. Кирнозе. СПб.: Алетейя, 2021, 494 с.
36. **Михайлова Т. Б.** *Менеджмент музеев: учеб.-метод. пособие*. М-во науки и высш. образования Рос. Федерации, Урал. федер. ун-т. Екатеринбург: Изд-во Урал. ун-та, 2019, 88 с.
37. *Музееведение. Естественно-научные музеи: (теория и практика работы)* / отв. ред. **И. В. Иксанова**. М., 1984, 145 с.
38. *Музееведение. Искусство музейной экспозиции и техническое оснащение музеев* / науч. ред. **А. Д. Тимрот**, М., 1985, 131 с.
39. *Музееведение. Проблемы использования и сохранности музейных ценностей* / сост. **Л. В. Дашкевич**, М., 1985, 138 с.
40. *Музееведение: учеб. пособие для студентов специальности 031502 “Музеология”* / **Л. Г. Гужова [и др.]**; под. ред. доц. **Н. В. Мягиной**. Владимир: Изд-во Владим. гос. ун-та, 2010, 116 с.
41. *Музей в современном мире: традиционализм и новаторство* / сост. **Л. И. Скрипкина**, М.: ГИМ, 1999, 198 с.
42. *Музей и демократия*. М-во культуры Рос. Федерации, Рос. акад. наук, Рос. ин-т культурологи; сост. **Н. А. Никишин**, М.: РИК, Лаб. музейного проектирования, 1997, 148 с.
43. *Музей и личность*. / Ответственный редактор **А. В. Лебедев**, Сост. **М. Ю. Юхневич**, М., 2007, 168 с.
44. *Музей и современные технологии: материалы всерос. науч. конф.* Томск, 20-23 мая 2003 г., 20-24 сент. 2004 г., 19-22 нояб. 2005 г. / отв. ред. **Э. И. Черняк**. Томск: Изд-во Томск. ун-та, 2006, 300 с.
45. *Музейная педагогика: учеб. пособие для студентов, обучающихся по направлению 51.03.04 “Музеология и охрана объек-*

- тов культурного и природного наследия” / Челябинская государственная академия культуры и искусств; каф. педагогики и психологии; сост. **Г. М. Каченя**. Челябинск: ЧГАКИ, 2015, 130 с.
46. *Музейное дело России*. / Под ред. **М. Е. Каулен, И. М. Косовой, А. А. Сундиевой**, М., 2003, 676 с.
  47. *Музейное дело России*. / Акад. переподгот. работников искусства, культуры и туризма, Рос. ин-т культурологии МК РФ; под общ. ред.: **М. Е. Каулен** (отв. ред.) [и др.]. М.: ВК, 2003, 615 с.
  48. *Музейные термины*. Терминологические проблемы музееведения: сб. науч. ст. / ЦМР СССР, М, 1986, 134 с.
  49. **Ноль Л. Я.** *Информационные технологии в деятельности музея*: учеб. пособие, М.: РГГУ, 2007, 204 с.
  50. *Основы музееведения*: учеб. пособие / Сост. **Т. В. Абанкина и др.**; отв. ред. **Э. А. Шулепова**. Гос. ин-т искусствознания, Рос. ин-т культурологии. М.: УРСС, 2005, 501 с.
  51. *Основы музееведения*: учебное пособие для студентов высших учебных заведений, обучающихся по специальности 052800 „Музейное дело и охрана памятников” / Сост. **Т. В. Абанкина и др.**; отв. ред. **Э. А. Шулепова**. Изд. 4-е, стер. М.: URSS: ЛИБРОКОМ. 2015, 430 с.
  52. **Поляков Т. П.** *Как делать музей? (О методах проектирования музейной экспозиции)*. М.: [Б.и.], 1997, 454 с.
  53. *Проблемы экспозиционной и фондовой работы* / Сост. **Л. М. Костюхина**. М.: ГИМ, 1987, 159 с.
  54. **Сапанжа О. С.** *Методология теоретического музееведения*, СПб.: изд. РГПУ ИМ. А. И. Герцена, 2008, 115 с.
  55. **Сапанжа О. С.** *Музеология: историография и методология*, учеб. пособие для вузов по направлению 050100 “Пед. образование”; РГПУ им. А. И. Герцена. СПб.: Изд-во РГПУ, 2014, 111 с.

56. **Сиволап Т. Е.** *Музееведение: учеб. пособие.* СПб.: СПбГИКиТ, 2018, 288 с.
57. **Сотникова С. И.** *Музеология: учеб, пособие для студентов вузов, обучающихся по специальностям 021000 “Музеология” и 052800 “Музейное дело и охрана памятников”,* М.: Дрофа, 2004, 190 с.
58. **Станюкович Т. В.** *Этнографическая наука и музеи: (по материалам этногр. музеев Акад. наук) / под ред. М. Г. Рабинович;* АН СССР, Ин-т этнографии им. Н. Н. Миклухо-Маклая. М.: Наука, 1978, 284 с.
59. **Столяров Б. А.** *Музейная педагогика. История, теория, практика: учеб. пособие.* М.: Высшая школа, 2004, 216 с.
60. **Тельчаров А. Д.** *Основы музейного дела: введение в специальность: курс лекций.* М.: Омега-Л, 2005, 179 с.
61. **Томилов Н. А.** *Музеология как отрасль знаний. Избранные лекции для студентов высших учебных заведений / Отв. ред. В. Г. Рыженко.* Омск: Издат. дом “Наука”, 2012, 100 с.
62. **Томсон Г.** *Музейный климат.* Пер. с англ., СПб.: Скифия, 2005, 288 с.
63. *Триумф музея?* С.-Петербург. гос. ун-т, Гос. Эрмитаж; редкол.: **М. Б. Пиотровский и др.** СПб.: Осипов, 2005, 460 с.
64. **Троянская С. Л.** *Музейная педагогика и ее образовательные возможности в развитии общекультурной компетентности:* учеб. пособие. Ижевск: Научная книга, 2007, 139 с.
65. **Турскова Т. А.** *Музеи мира.* М.: ТЕРРА - книжный клуб, 2001, 351с.
66. **Шляхтина Л. М.** *Основы музейного дела: теория и практика.* Учебное пособие, 9-е изд., стер. СПб.: Лань, “Планета музыки”, 2025, 248 с.
67. **Шляхтина Л. М., Фокин С. В.** *Основы музейного дела: Учеб. пособие для студентов педагогических гуманитарных вузов.* СПб.: СпецЛит, 2000, 160 с.

68. **Шмелев М. Н.** *Музеи под открытым небом: очерки истории, возникновения и развития.* Киев, 1983, 119 с.
69. **Шустрова И. Ю.** *История музеев мира: учеб. пособие.* Яросл. гос. ун-т, Ярославль, 2002, 175 с.
70. **Юренева Т. Ю.** *Музееведение. Учебник для высшей школы,* М., Акад. Проект, 2007, 560 с.
71. **Юхневич М. Ю.** *Я поведу тебя в музей: учеб. пособие по музейной педагогике.* М-во культуры РФ, Рос. ин-т культурологии, М., 2001, 223 с.
72. **Aagaard-Mogensen, Lars.** (1988) *The Idea of the Museum: Philosophical, Artistic, and Political Questions.* Lewiston / Queenston, Edwin Mellen Press Limited, 228 p.
73. **Ambrose, T; Paine, C.** (1993) *Museum Basics.* London, New York: ICOM in conjunction with Routledge, 319 p.
74. **Ambrose, T; Paine C.** (2001) *Museum Basics.* Seoul: Hakgojae Publishing Company, 406 p.
75. *A Museum Studies Approach to Heritage* (2018). Ed. by **Sh. Watson, A. J. Barnes, K. Banning.** Routledge, 901 p.
76. **Anderson, G.** (2004) *Reinventing the Museum: Historical and Contemporary Perspective on the Paradigm Shift.* Walnut Creek: Rowman and Littlefield, 402 p.
77. *Avant-Garde Museology: e-flux classics* (2015). Ed. by **A. Zhilyaev.** E-flux, 576 p.
78. **Bishop, C.** (2014) *Radical Museology: Or What's Contemporary in Museums of Contemporary Art?* Koln, Walther Kbnig, 88 p.
79. **Black, G.** (2012) *Transforming Museums in the Twenty-first Century.* Routledge, 276 p.
80. **Burcaw, G. E.** (1997) *Introduction to Museum Work.* Walnut Creek, London, Altamira Press, 3rd ed, 237 p.
81. **Dewdney, A.; Dibosa, D.; Walsh, Y.** (2013) *Post Critical Museology: Theory and Practice in the Art Museum.* Routledge, 290 p.

82. **Eid, H.** (2019) *Museum Innovation and Social Entrepreneurship: A New Model for a Challenging Era* (Routledge Research in Museum Studies). Routledge, 192 p.
83. **Hooper-Greenhill, E.** (2007) *Museums and Education. Purpose, Pedagogy, Performance*. New York, Taylor & Francis e-Library, 231p.
84. *Key Concepts of Museology* (2010) ed. by **A. Desvallees and F. Mairesse**. ICOM, Armand Colin, 83 p.
85. **Knell, S.** (2004) *The Museum and the Future of Collecting*. London, Ashgate, 2nd ed., 266 p.
86. **Mensch, P. van; Meijer-van Mensch, E.** (2011) *New trends in museology*. Celje (Slovenia), Museum of Recent History Publ., 117 p.
87. *Museum Ethics: Theory and Practice* (2005). Ed. by **G. Edson**. Routledge, 308 p.
88. *Museum Revolutions: How Museums Change And Are Changed* (2007) Ed. by **J. S. Knell; S. MacLeod; S. Watson**. London: Routledge, 416 p.
89. *Reframing the Ethnographic Museum* (2025) Ed. by **M. Rowlands, N. Stanley, G. Were**, London: UCL Press, 250 p.
90. **Simon, N.** (2010) *The Participatory Museum*. Santa Cruz: Museum 2.0, 390 p.

# ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ՌԻՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

## *Հարգելի՛ ուսանող*

սույն բաժնում ներկայացված ցուցումները կօգնեն քեզ հասկանալու դասընթացի կառուցվածքը, ակնկալիքները և արդյունավետ ուսուցման ռազմավարությունները:

### **1) Դասընթացի նպատակների ըմբռնում**

- ❖ Նախ և առաջ, հստակ պատկերացրո՛ւ, որ սույն դասընթացը նպատակ ունի զարգացնել ձեր գիտելիքները թանգարանների պատմության, գործառույթների, կառավարման և հանրային ներգրավման ոլորտներում:
- ❖ Իմացի՛ր, որ դասընթացի բովանդակային կառուցվածքը համադրում է թե՛ տեսական, և թե՛ գործնական բաղադրիչներ՝ նպաստելով ձեր մասնագիտական պատրաստվածությանը:

### **2) Ուսումնական նյութերի ուսումնասիրում**

- ❖ Մշտապես ծանոթացի՛ր դասախոսության նյութերին, ինչպես նաև ընթերցի՛ր առաջարկվող գրականությունը:
- ❖ Նշումներ արա՛ դասերի ընթացքում՝ կարևոր հասկացությունների, տերմինների և օրինակների վերաբերյալ:
- ❖ Ուսումնասիրի՛ր միջազգային կազմակերպությունների փաստաթղթեր, օրինակ՝ ԻԿՕՄ-ի էթիկայի կանոնակարգը:

### **3) Քննարկումների մասնակցություն**

- ❖ Ակտիվորեն մասնակցի՛ր սեմինար-քննարկումներին՝ արտահայտի՛ր քո կարծիքը, տու՛ր հարցեր և ներգրավվի՛ր բանավեճերին:
- ❖ Նախապապատրաստվի՛ր քննարկումներին՝ կարդա՛ առաջադրված նյութերը և պատրաստի՛ր կարճ վերլուծություններ:

- ❖ Հարգանքով վերաբերվի՛ր համակուրսեցիներիդ տեսակետներին և խթանի՛ր բազմակողմանի քննարկումները:

#### **4) Հետազոտական և գործնական աշխատանքներ**

- ❖ Հետաքրքրվի՛ր տեղական և միջազգային թանգարանների գործունեությամբ:
- ❖ Ուսումնասիրի՛ր թվային թանգարանների զարգացումը և դրանց ազդեցությունը հանրային կրթության վրա:
- ❖ Թանգարանային այցից հետո կազմի՛ր վերլուծական հաշվետվություն՝ դիտարկումներով, առաջարկներով և լուսանկարներով (եթե թույլատրվում է):
- ❖ Փորձի՛ր համադրել արվեստաբանական գիտելիքները թանգարանային պրակտիկայի հետ:
- ❖ Ստեղծի՛ր ցուցադրություն հանձնարարված թեմատիկայով:

#### **5) Համագործակցություն և էթիկա**

- ❖ Հետևի՛ր ակադեմիական ազնվության սկզբունքներին՝ չկրկնօրինակելով և չօգտագործելով չթույլատրված աղբյուրներ:
- ❖ Խմբային նախագծերում համագործակցի՛ր համակուրսեցիներիդ հետ:
- ❖ Հարգանքով վերաբերվի՛ր թանգարանային միջավայրին՝ այցերի ժամանակ պահպանելով վարքականոնները:

#### **6) Ժամանակի կառավարում**

- ❖ Կազմի՛ր ուսումնական օրագիր՝ նշելով առաջադրանքների ժամկետները:
- ❖ Մի՛ թող առաջադրանքները վերջին պահի համար՝ դա կարող է ազդել որակի վրա:

## РЕЗЮМЕ

### МУЗЕЕВЕДЕНИЕ

#### Учебная программа – методическое руководство

*Марине Минасян*

Учебная программа курса «Музееведение» предназначена для студентов третьего курса бакалавриата по специальности «Искусствоведение» кафедры истории и теории армянского искусства факультета истории ЕГУ.

Данное руководство состоит из введения, разделов, соответствующих содержанию программы курса, списка рекомендуемой профессиональной литературы и методических указаний, необходимых для более глубокого понимания и легкого усвоения учебного материала студентами.

Программа адресована студентам старших курсов высших учебных заведений РА, а также специалистам и преподавателям, занимающимся современными теоретическими и практическими проблемами искусствоведения и музееведения.

## SUMMARY

### MUSEOLOGY

#### Course curriculum-methodical guide

*Marine Minasyan*

The "Museum Studies" course curriculum is designed for third-year undergraduate students majoring in " Art History" at the Department of History and Theory of Armenian Art, Faculty of History, Yerevan State University (YSU).

This guide includes an introduction, sections aligned with the course syllabus, a list of professional literature, and methodological instructions aimed at helping students achieve a deeper understanding and easy mastery of the subject matter.

The curriculum is addressed to senior students of higher education institutions in Armenia, as well as specialists and lecturers dealing with modern theoretical and practical issues of art history and museum studies.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն .....	3
Թանգարանագիտության տեսամեթոդաբանական հիմքերը .....	7
Թեմատիկ դասաբաշխում .....	13
Դասընթացի թեմատիկ բովանդակությունը .....	15
Հիմնական և լրացուցիչ գրականություն .....	25
Մեթոդական ցուցումներ ուսանողների համար .....	33
Резюме .....	35
Summary .....	36

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՄԱՐԱՆ

**«ԹԱՆԳԱՐԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»**

*դասընթացի ուսումնական  
ծրագիր-մեթոդական ուղեցույց*

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի  
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի  
Հրատ. խմբագրումը՝ Լ. Հովհաննիսյանի

*Հեղինակը հաստատում է, որ ծանոթ է «ԵՊՀ գրահրատարակչական քաղաքականությանը», և գրքում առկա փաստերը, դիրքորոշումները, կարծիքները շարադրված են հեղինակային իրավունքի և էթիկայի միջազգայնորեն ընդունված սկզբունքների պահպանմամբ:*

Ստորագրված է տպագրության՝ 23.02.2026:  
Չափսը՝ 60x84 /16: Տպ. մամուլը՝ 2.5:  
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն  
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1  
[www.publishing.ysu.am](http://www.publishing.ysu.am)



[publishing.y-su.am](http://publishing.y-su.am)